ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

ԳԼԱՁՈՐ

•

ՏԵՂԱԴՐԱԿԱՆ. — Գլաձորի վանքը կը գտնուէր Սիւնեաց Նահանգի Վայոց Ձոր գաւառին մէջ։ Վանքին անունը կը գրուի այլեւայլ ձեւերով. ինչպէս, Գայլուձոր, Գայլիձոր, Գայլեձոր, եւայլն։ Գրիչ Գրիգոր քահանայի համաձայն ճիշդ կոչումն է Գլաձոր «որ յանհմուտ և գնչու արանց Գայլաձոր ասի»։ Նախկին անունն էր Աղբերց վանք, զոր կը պարտէր մօտերէն բխող աղբիւրներու բազմութեան։ Եկեղեցին նուիրուած էր Ս. Ստեփանոս Նախավկայի անունին։

ՊԱՏՄԱԿԱՆ. — Գլաձորի վանքը իբրև մեծահամբաւ կեդրոն կը փայլի մեր պատմութեան մէջ կարճ պահիկ մը միայն։ Այդ միջոցին հոն կը դասախօսեն գիտութեամբ հռչակուած երկու մեծ վարդապետներ,

1. — Ներսէս Վրդ. Մշեցի, (1280–մ. 1284 փետր. 6), որ աշակերտած էր Վարդան վարդապետի, և լաւ հմուտ էր յունարէն լեզուին, և հասցուց քանի մը անուանի վարդապետներ, ինչպէս, Մխիթար Վրդ. Կերմանեցի կամ Սասնեցի (✻ 1337), Յովհաննէս Վրդ. Արճիշեցի՝ Ոսպնակեր, Ստեփանոս արք. Օրբէլեան, և այն որ յաջորդեց իրեն,

2. — Եսայի Վրդ. Նչեցի (1284–մ. 1338), որուն բազմաթիւ աշակերտներուն մէջ նշանաւորագոյն հանդիսացան Խաչատուր Վրդ. Կեչառեցի, Յովհաննէս Վրդ. Որոտնեցի և Տիրատուր Վարդապետ։

Եսայի Վրդ. Նչեցիի երկերէն յայտնի են.

ա. — Մեկնութիւն Եղեկիէլի, Ստեփ. Օրբէլեանի խնդրանքով գրուած 1303ին. — Ձեռ. Էջմ. թ. 1265/1275, թ. 1266/1276։

բ. — Մեկնութիւն Քերականի. — Ձեռ. Էջմ. թ. 1523/1548։

գ. — Համառօտ Լուծմունք Յաղագս Երկնային Քահանայութեանց Գրոց Դ. Արիսպագացւոյ. — Ձեռ. Էջմ. թ. 161/167։

դ. — Ճառք Մեկնողականք. — Խաղբ. Բ. էջ 275, 277։

ե. — Թուղթ վասն Կարգաց Եկեղեցւոյ և ժամուց. — Ձեռ. Էջմ. թ. 1523/1548։

զ. — Յաղագս Ձեռնադրութեան, 1333-7 թուականներուն գրուած. — Ձեռ. Էջմ. թ. 2193/2178։

ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ. — Գլաձորի վանքը առաւելապէս դպրեվանք մը եղած է, ուր յաճախած են ամէն կողմերէ ուսումնասէր երիտասարդներ և կրօնաւորներ ստանալու համար կրօնական և եկեղեցական բարձրագոյն ուսում և վարդապետական գաւազան։ Կարճատև եղած է Գլաձորի կեանքը, հազիւ վաթսուն տարի (1280-1338)։ Դպրաբոցին ուսուցչապետները եղած են նախ Ներսէս Վրդ. Մշեցի, իբր օգնական ունենալով Եսայի Նչեցին, և ապա Եսայի վարդապետ, իբրև օգնական ունենալով Դաւիթ վարդապետը։ Նչեցիի մահով և ժամանակին քաղաքական վերիվայրումներուն հետեւանքով Գլաձորի Համալսարանը պատմութեան բեմէն կ'անհետանայ յանկարծակի, ինչպէս եղած էր իր երեւումն ալ։

Հակառակ ժամանակին կարճ տեւողութեան Գլաձորը կատարած է մեծ դեր, թէ հասցնելով զարգացած վարդապետներու շարքեր, և թէ արտագրութեամբ բազմացնելով այնպիսի թանկագին երկեր, որոնք իր միջոցաւ փրկուած են և հասած մեզի։ Բազմաթիւ են ընտիր Գրիչներ և ոչ սակաւ նշանաւոր մանրանկարիչներ, որոնց մէկ ամփոփ ցանկը ահաւասիկ, ժամանակագրական կարգով.

Ա. — Լուսեր Գրիչ, 1280ին օրինակած է Հաւաքածոյ մը, հռետոր Ներսէս Վրդ. Մշեցիին համար, որ կը պարունակէ Եզեկիկի հնագոյն ընդօրինակութիւնը. — Խաղբ. Գ. 154։

Բ. — Ստեփանոս Կրօնաւոր, Գրիչ, 1282ին օրինակած է մէկ Յաղագս Երկնային Քահանայապետութեան, Դ. Արիսպագացւոյ, հրամանաւ հռետոր Ներսէս վարդապետի. — Կար. թ. 67։ Խաղբ. Բ. 203-6։

Գ. — Եսայի Վրդ. Նչեցի, Գրիչ, Սրբագրիչ եւ Հեղինակ (1280-մ. 1338). օրինակած է 1280 ական թուականներուն,

1. — Մեկն. Յայտնութեան Յովհաննու, Անդրէաս եպիսկոպոսի. — Կար. թ. 1396։

digitised by A.R.A.R.@

2.– Գիրք էակաց, *եայլն*. — *Կար*. *թ*. 1778։

Դ. — *Յովհաննէս Կրօնաւոր, Գրիչ*, 1291-8, *օրինակած է*,

1.– Մեկն. Կարողիկեայց, 1291*ին*. — *Հայաս*. 525։ *Սիսկ*. 131։ *Երնջակ*, 157։

2.– Գիրք Պիտոյից, 1298*ին*. — *Սիսկ*. 133։ *Խաղբ*. *Բ*. 210։

3.– Աստուածաշունչ, *Տոսպեցի Կարապետ վարդապետի համար*. — *Ֆր*. *Մուրատ, Բայանութիւն, ՅԺԹ*։

Ե. — *Տիրացու Գրիչ*, 1291-1317։ *Գլաձորի մէջ Յովասափ գրչի օրինակած Մեկնութեան բովանդակ քարտէսը կոկած է 1291ին. նաև մասնակցած է Աստուածաշունչի մը ընդօրինակութեան*, 1317*ին*. — *Կար*. *թ*. 175։ *Խաղբ*. *Գ*. 166։

Զ. — *Յովասափ Գրիչ*, 1292*ին օրինակած է մէկ* Մեկն. Գործոց, *Դէորդ Լամբրոնացիի, Եսայի վրդ*. *Նչեցիի համար*. — *Կար*. *թ*. 1333։ *Խաղբ*. *Բ*. 210։

Է. — *Մկրտիչ Քահանայ, Գրիչ*, 1298-1302, *աշակերտ Գրիգոր վրդ*. *Բջնեցիի* (✱ 1298) *և Եսայի վրդ*. *Նչեցիի։ Գլաձորի մէջ օրինակած է 1298ին մէկ Հաւաքումն* Մեկնութեանց. — *Խաղբ*. *Գ*. 158-160։

Ը. — *Վարդան Վրդ*. *Կիլիկեցի, Գրիչ*, 1299?-1305?, *աշակերտ Եսայի վրդ*. *Նչեցիի*. *օրինակած է*,

1.– Մեկն. Եսայեայ, *Դէորդ վրդ*. *ըՍկեւռացիի*, 1299*ին, որ Կեսարիոյ Կոստանդին արքեպիսկոպոսին կողմէ Նուէր կը ղրկուի Եսայի արդիւնաբան վարդապետին, ձեռամբ Մրենու Վարդան եպիսկոպոսին*. — *Ս*. *Ց*. *թ*. 365։ *Պատմ*. *Կեսարիոյ էջ* 1845։

2.– Մեկն. Սաղմոսաց, *Ն*. *Լամբրոնացւոյ*, (*մասամբ*), 1300 *թուին*. — *Խաղբ*. *Գ*. 161։

3.– Ընդհանրական *եայլն*, *Ն*. *Շնորհալիի*, 1305*ին, որ Անաւարզեցի Գր*. *կաթողիկոսին կողմէ Նուէր կը ղրկուի Եսայի Նչեցիին*, 1305*ին, ձեռամբ կաթողիկոսի «հաւատարիմ լիկատին տէր Կոստանդեայ արքեպիսկոպոսին Կեսարու»*. — *Շողակաթ էջ* 209։

4.– Մեկն. Ինն Երանութեանց եւ Հայր Մերի, *Գր*. *Նիւսացւոյ*. — *Ձեռ*. *Էջմ*. *թ*. 652/749։ *Խաղբ*. *Գ*. 163։

Թ. — *Յովհաննէս Վրդ*. *Երզնկացի, Մորձորեցի, Պլուզ, Նշ*. *Գրիչ եւ Մատենազիր*, 1300-1326, *աշակերտ Վարդան վարդապետի*. *օրինակած է Գլաձորի մէջ*,

1.– Մեկն. Սաղմոսաց, *Ն*. *Լամբրոնացւոյ*, (*մասամբ*), 1300*ին*. — *Խաղբ*. *Գ*. 161։

2.– Ժողովածու Մեկնութեանց Յովհ. Աւետարանչի, 1306*ին*. — *Կար*. *թ*. 1311։ *Շողակաթ էջ* 210։ *Խաղբ*. *Գ*. 165։

3.– Աստուածաշունչ, 1318*ին, Կիրակոս Երզնկացիի հետ, նկարազարդող Թորոս Տարօնեցի, ստացող Եսայի վրդ*. *Նչեցի*. — *Կար*. *թ*. 176։ *Շողակաթ էջ* 211։ *Խաղբ*. *Գ*. *էջ* 169-70։

Ժ. — *Մխիթար Վրդ*. *Սասնեցի կամ Կերմանեցի, Գրիչ, Մաղկող եւ Հեղինակ*, 1260?-*մ*. 1337, *աշակերտ Ներսէս վրդ*. *Մշեցիի և Եսայի վրդ*. *Նչեցիի։ Գլաձորի մէջ օրինակած է* 1303*ին, մէկ* Վերլուծութիւն Դանիէլի Մարգարէի. — *Խաղբ*. *Գ*. 165։

ԺԱ. — *Ոսկան Վրդ*. *Գրիչ*, 1304*ին օրինակած է* Աւետարան *մը*. — *Թ*. *Աղբար Բ*. 375։ *Սիսկ*. *էջ* 134։

ԺԲ. — *Տիրատուր Կիլիկեցի, Գրիչ*, 1309*ին օրինակած է* Աւետարան *մը*. — *Խաղբ*. *Բ*. 218։

ԺԳ. — *Կիւրիոն Կրօնաւոր, Գրիչ*, 13-11-33, *որդի Վարդան քահանայի, աշակերտ Եսայի վրդ*. *Նչեցիի*. *Գլաձորի մէջ օրինակած է*,

1.– Ժողովածու Մեկնութեանց, 1311 *ին*. — *Կար*. *թ*. 1429։ *Խաղբ*. *Գ*. 176։

2.– Աւետարան, 1321*ին*. — *Յովս*., *Մի էջ* 19։

ԺԴ. — *Թորոս Տարօնեցի, Գլաձորեցի, Նշ*. *Մանրանկարիչ*, 1307-1346, *որդի Մշեցի Սարգիս քահանայի և Մարիամի*. *Գլաձորի մէջ արտագրած իր երկերէն ծանօթ են*,

1.– Աւետարան, *գրիչ Պօղոս վարդապետ, ծաղկող Թորոս*, 1307*ին, ստացող Եսայի վրդ*. *Նչեցի*. — Sir. Der Ners., Manus. Arm. III., Paris, 1937, p. 179։ *Ց*. *Քիւրտեան, Բազմ*. 1947 *էջ* 217։

2.– Գիրք Լուծմանց, 1314*ին նկարազարդած է*. *գրիչ Մխիթար Երզնկացի*. — *Ձեռ*. *ի Վենետիկ։ Հանդ*. *Ամս*. 1915, *էջ* 64-5։

3.– Աստուածաշունչ, 1317*ին նկարազարդած է*. *օրինակուած է չորս գրիչներէ, որոնցմէ Կիրակոս վրդ*. *Երզնկացին է ըստացողը*. — *Կար*. *թ*. 175.

4.– Ոսկեփորիկ, 1317-8*ին*, *Սարգ*. *թ*. 265։

digitised by A.R.A.R.@

5.— Աստուածաշունչ, նկարազարդած է 1318ին։ Գրիչներն են Կիրակոս և Յովհաննէս Երզնկացիներ. ստացող՝ Եսայի վրդ. Նչեցի.— Կար. թ. 176։ Շող. էջ 211։

6.— Աւետարան, 1321ին նկարազարդած է. գրիչ Կիւրեղ քահանայ.— Կոն., Բրիտ. Թանգ. թ. 14։ Ros. III. 270։

7.— Գիրք Եօթն խորհրդոց, Թ. Ագուլեցւոյ, թրգմ. Յովհաննէս Մործոսրեցի (13-21ին). Թորոս գրած է մէկ մասը 1325ին. ստացող Սարգիս վարդապետ.— Կար. թ. 493։ Խաղբ. Գ. էջ 174-5։

8.— Աստուածաշունչ, 1328ին նկարազարդած է. գրիչ Դաւիթ վրդ. Գետակեցի, ստացող Առաքել վրդ. Հաղբատեցի.— Խաղբ. Գ. 103-5։

9.— Աստուածաշունչ, 1330-32ին, օրինակուած Դաւիթ և Եփրեմ գրիչներէ, Սասնեցի Ներսէս վարդապետին համար.— Սարգ. թ. 12։

ԺԵ.— Պօղոս Վրդ. Ակներցի, Քաջ Գրչապետ եւ Մանրանկարիչ, 1313-34. աշակերտ Եսայի վրդ. Նչեցիի։ Գլաձորի մէջ օրինակած է,

1.— Աւետարան, 1313ին և նկարազարդած կիլիկեան ոճով.— Խաղբ. Գ. 166։

2.— Աւետարան, 1314ին, և նկարազարդած նոյնպէս կիլիկեան ոճով. ստացողն է Ստեփ. Օրբէլեան.— Խաղբ. Բ. էջ 41, 221։

3.— Աւետարան, 1334ին. ստացողն է Գրիգոր քահանայ.— Լոյս, 1905, էջ 367։

ԺԶ.— Մխիթար Երզնկացի, Գրիչ, 1314-28, որդի Պօղոսի և Տիրանցի, աշակերտ Գրիգորիս Երզնկացիի կամ Ցաղմնացիի։ Գլաձորի մէջ օրինակած է մէկ Գիրք Լուծմանց, 1314ին, զոր ծաղկած է գեղեցկապէս՝ Թորոս Տարօնեցի.— Հանդ. Ամս. 1915, էջ 64։ Ros. II. 29։ Խաղբ. Բ. 220։ Հայպ. էջ 525-6։

ԺԷ.— Կիրակոս Վրդ. Երզնկացի, Նշ. Գրիչ եւ Հեղինակ, 1317-54, հօրեղբայր Յովհաննէս Երզնկացի գրչի, աշակերտ Եսայի վրդ. Նչեցիի։ Գլաձորի մէջ ընկերակցաբար օրինակած է,

1.— Աստուածաշունչ (մասամբ), 1317 ին.— Կար. թ. 175։

2.— Աստուածաշունչ (մասամբ), 1318 ին.— Կար. թ. 176։

ԺԸ.— Յովհաննէս Սարկ. Երզնկացի, Գրիչ, եղբօրորդի Կիրակոս վրդ. Երզնկացիի, որուն հետ միասին օրինակած է Աստուածաշունչ մը, 1317ին, իր հօրեղբօր համար.— Կար. թ. 175։ Խաղբ. Գ. 166։

ԺԹ.— Կարապետ Երէց, Գրիչ, որդի Գրիգորի և Հաղբեվարդի, 1317ին մասնակցած է ընդօրինակութեան Աստուածաշունչի մը, Երզնկացի Կիրակոս վարդապետի և այլ գրիչներու հետ.— Կար. թ. 175։ Խաղբ. Գ. 166։

Ի.— Սարգիս Աբեղայ, Գրիչ, 1317-8ին օրինակած է Ոսկեփորիկ մը, որուն ստացողներն են Գրիգորէս և իր ամուսինը Մամախաթուն։ Ծաղկած է Թ. Տարօնեցի.— Սարգ. թ. 265։ Խաղբ. Բ. 222։ Սիսկ. 133։

ԻԱ.— Յակոբ Վրդ. Թագորցի, Գրիչ, Գլաձորի մէջ 1318ին օրինակած է

1.— Կանոնագիրք, Տիրացու քահանայի համար.— Խաղբ. Գ. 102։

2.— Գիրք Մարդակազմութեան, Գր. Նիւսացւոյ.— Սիսկ. էջ 133։ Խաղբ. Բ. էջ 232։

ԻԲ.— Եփրեմ Աբեղայ, Գրիչ, 1318-30.— Աշակերտ Մարտիրոս վարդապետի։ Գլաձորի մէջ օրինակած է,

1.— Հաւատածոյ Մեկնութեանց, 1318 ին.— Խաղբ. Գ. 170-1։

2.— Աստուածաշունչ, 1330ին, Դաւիթ Գետակեցիի հետ, Սասնեցի Ներսէս վարդապետի համար.— Սարգ. թ. 12։

ԻԳ.— Կիւրեղ Կրօնաւոր, Գրիչ, 1321 ին օրինակած է Աւետարան մը, կուսակրօն Մարտիրոս քահանայի համար.— Կոն. թ. 14։ Ros. III. 270 (9)։

ԻԴ.— Դաւիթ Վրդ. Գետակեցի, Գրիչ, 1327-30. Գլաձորի մէջ օրինակած է,

1.— Աստուածաշունչ, 1327-8ին, Հաղբատեցի Առաքել վարդապետին համար.— Խաղբ. Գ. էջ 103-5։

2.— Աստուածաշունչ, 1330ին, Եփրեմ գրչի հետ, Սասնեցի Ներսէս վարդապետի համար. նկարազարդած է Թ. Տարօնեցի.— Սարգ. թ. 12։ Խաղբ. Բ. 238։

ԻԵ.— Ցունան Գրիչ, 1334ին իրմէ օրինակուած պատառիկ մը, ընտիր բոլորգրով.— Շողակաթ էջ 213։ Խաղբ. Բ. 240։

ԻԶ.— Գրիգոր Քահանայ, Գրիչ, 1335 ին օրինակած է մէկ Մեկն. Առակաց, Ն. Լամբրոնացւոյ.— Խաղբ. Գ. 178։

Ն. Վ. ԾՈՎԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@